

- նկարագրեալ՝¹ ազնիւ դեղօք՝ ճարտարական։
Քարձրագունեղ՝ գումբէթ քոյին՝ վերելական.
քուաքատակեալ՝² բոլորագլիժ՝ ձեռ պատուական։
Փեղազարդեալ՝ ծաղկայօրէն՝ արուեստական.
- 5 յաչս տեսողաց՝ յոյժ ցանկալի՝ աննմանական։
Հոյլք անբանից՝ ըն համօրէն՝ վայրենական.
ազգի ազգի՝ սերեալ ծննդովք՝ յաճախական։
ի ծաղկաւէտ՝ վայրդ դալարուջ՝ տաժողական.
միշտ դեգերին՝ ի նոյն կանխեալ՝³ յաւերժական։
- 10 Խայտան յաւէտ՝ կայտոին անկէտ՝ ամենեքեան.
ոչ երկնչին՝ ի յօրսորգաց՝ դարանական։
Այս արտաքին՝ ձե գեղեցիկ՝ վայելչական.
Քո սվ տաճար՝ յարկ աղօթից՝ մաքուր կայան։
† Ապա ներքին՝ վայելչակերտ՝ կազմ գոնազան.
- 15 ոսկէզօծիւք՝ փայլատակեալ՝ արփիանման.

- 48ա Վերուստ ի վայր՝ դեղագունեալ՝ հիանալի.
պաճուճագարդ՝ տիպ պատկերաց՝ ըն հրաշալի։
Մբ սրբուի՝ ըն սրբուեց՝ անճառելի.
եռ առաւել՝ պայծառացեալ՝ անպատմելի.
- 20 Անդ ուր մարմին՝ մեղսաքաւիչ՝ մեր արարչի.
օր ըստ օրէ՝ անձախապէս՝ պատարագի։
Ամենասբ՝ երրորդուե՝ն՝ բարերարի.
անմարմին տիպ՝ ճաճանճագեղ՝ նկար՝ գրի։
ի յառանաղ՝ սբ սրբուեց՝ ըն խորանի.
- 25 կազմակերպեալ՝ կոնանչագեղ՝ տիպ գմբուխտի։
Ուր սբ նշանն՝ տբունական՝ անյաղթելի.
հայրականաւ՝ մաքուր Աջով աեառնագրի։
Սրովբէաճեմս՝ խորան լուսոյ՝ յարկ տբունի.
առաւելի՝ լ՝ փառօք մեծաւ՝ գարմանալի։
- 30 Քան զոր կանգնեաց՝ մեծ սօղոմօնն՝ իմաստիւք լի.

¹ 2-րդ Ի-ի վրայ սղման (օ) նշան՝ վանկի յապաւման պատճառով.

² 2. ու-ի վրայ սղման նշան.

³ 2. կանխանեալ.